



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ք. Դիլիջան, Շահումյան-15, հեռ. 0268/ 2-71-12

N ԴԴ-29/Ե 4914

«26» 11 2012թ.

հայցվոր՝

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմ
պետական կառավարչական հիմնարկ ✓
/ՀՀ Տավուշի մարզ, ք.Իջևան, Սահմանադրություն-1/

պատասխանող՝

Նորայր Սամվելի Երկնափեշյան
/ՀՀ Տավուշի մարզ, ք.Նոյեմբերյան, Տեղաբնակավայր-6/


Կից ուղարկվում է ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի ընդդեմ Նորայր Սամվելի Երկնափեշյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին քաղաքացիական գործով Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 26.11.2012թ. թիվ ՏԴ3 0056/02/12 վճիռը:


Առդիր՝

վճիռը «3» թերթից:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ա. Ս. ԽԱՉԻԿՅԱՆ







քաղաքացիական գործ թիվ ՏԴՅ-0056/02/12

Վ Ե Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

26 նոյեմբերի 2012թ.

ք. Դիլիջան

ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը

նախագահությամբ՝ դատավոր Աշոտ Խաչիկյանի,
քարտուղարությամբ՝ Օովիկ Չեպելյանի,

մասնակցությամբ՝

հայցվոր՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմ
պետական կառավարչական հիմնարկի,
պետական գրանցման վկայական թիվ 01 Բ 000457,
ՀՎՀՀ 07611324,

հայցվորի ներկայացուցիչ՝ Արման Գևորգյանի,
անձնագիր՝ AH 0676151, տրված 06.10.2008թ., 038-ի կողմից,

պատասխանող՝ Նորայր Երկնափեշյանի,
անձնագիր՝ AG 0277438, տրված 16.07.2004թ., 047-ի կողմից,


դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի ընդդեմ Նորայր Սամվելի Երկնափեշյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

II

1. դատավարական նախապատմությունը.

2012թ. սեպտեմբերի 12-ին «ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը դիմել է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ պատասխանող Նորայր Սամվելի Երկնափեշյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության 79593 ՀՀ դրամ պարտքի գումարի բռնագանձման պահանջով՝ բռնգանձումը տարածելով գրավի առարկա հանդիսացող գույքի, իսկ գրավի առարկայի իրացումից ստացված միջոցների անբավարարության դեպքում՝ պատասխանողի այլ գույքի վրա: Միաժամանակ, հայցվորը խնդրել է պատասխանողից բռնագանձել նաև ժամկետանց պարտավորության գումարի նկատմամբ սկսած կետանցի օրվանից՝ 16.09.2011թ. մինչև պարտավորությունների փաստացի կատարման պահը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տոկոսները,



պարտավորեցնել պատասխանողին հոգուտ ՀՀ պետական բյուջեի մուծել պետական տուրքի գումարը:

2012թ. սեպտեմբերի 13-ին հայցադիմումն ընդունվել է դատավոր Աշոտ Խաչիկյանի վարույթ և գործը քննության է նշանակվել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Նոյեմբերյանի նստավայրում 2012թ. հոկտեմբերի 3-ին ժամը 14:30-ին, իսկ պատասխանողին պատկանող գույքի ու դրամական միջոցների վրա հայցագնի չափով արգելանք դնելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը մերժվել է: Նույն որոշմամբ հետաձգվել է ներկայացված հայցադիմումով պետական տուրքի վճարման ժամկետը՝ այն վճռով լուծելու համար:

Հայցադիմումին պատասխան կամ հակընդդեմ հայց չի ներկայացվել:

Գործը դատաքննության է նախապատրաստվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22.2 գլխի կանոններով սահմանված կարգով:

12.11.2012թ. հայցվոր «ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը գրավոր դիմումով հրաժարվել է ներկայացված հայցից:

12.11.2012թ. գործի քննությունն ավարտվել է և վճռի հրապարակման օր է հայտարարվել 26.11.2012թ.:

2. Հայցվորի դիրքորոշումը.

Հայցվորն իր պահանջը հիմնավորել է հետևյալ փաստերով և դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերով.

Համաձայն հայցադիմումի, ՀՀ մաքսային օրենսդրության փոփոխությունների անցումային շրջանում ֆիզիկական անձանց կողմից ՀՀ ներմուծված տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումներին աջակցելու նպատակով ՀՀ կառավարության 24.02.2011թ. «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով մարդատար տրանսպորտային միջոցներ ներմուծող ֆիզիկական անձանց բյուջետային վարկեր տրամադրելու, Հայաստանի Հանրապետության 2011թ. պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին N 161-Ն որոշմամբ /այսուհետ՝ Որոշում/ հաստատվել է «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով մարդատար տրանսպորտային միջոցներ ներմուծող ֆիզիկական անձանց բյուջետային վարկերի տրամադրման կարգը /այսուհետ՝ Կարգ/ և օրինակելի պայմանագրի ձևը:

Որոշման համաձայն, Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի /Վարկատու- Գրավառու/ և պատասխանող Նորայր Սամվելի Երկնափեշյանի /Վարկառու-Գրավատու/ միջև 15 մարտի 2011թ. կնքվել է «Բյուջետային վարկի տրամադրման և տրանսպորտային միջոցի գրավադրման մասին» թիվ ՏԱՎ 0214 պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/:

Նշված պայմանագրի համաձայն, Վարկատու-Գրավառուն պարտավորվում է տրամադրել բյուջետային վարկ Վարկառու-Գրավատուի կողմից ներմուծված՝ Պայմանագրով նախատեսված տրանսպորտային միջոցի մաքսագերծման վճարումները կատարելու նպատակով՝ Որոշմամբ հաստատված Կարգի ընթացակարգերին համապատասխան, իսկ Վարկառու-Գրավատուն պարտավորվում է վերադարձնել ստացված վարկը և որի ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության օգտին գրավադրում է Պայմանագրով նախատեսված՝ GAZ 3102 մակնիշի տրանսպորտային միջոցը /թողարկման տարեթիվը 1995թ., գույնը՝ սև/:

Պայմանագրի «Վարկի չափը» բաժնի համաձայն, վարկի չափը հավասար է «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով վարկառուին տրվող մաքսային հայտարարագրով վճարման առաջարկվող մաքսային վճարումների չափին և առկայության դեպքում՝ դրանց հնարավոր ուշացման համար մաքսային մարմնի կողմից

հաշվարկվելիք տույժերի, ինչպես նաև «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի խախտման համար մաքսային մարմնի կողմից հնարավոր արձանագրելի տուգանքների գումարին ըստ Կարգով նախատեսված փաստացի վճարման:

«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի «Նորագավիթ» մասնաճյուղի 16.03.2011թ. բազմակի փոխանցման հանձնարարագրի անդորրագիր N 4608-ով Կարգի 12-րդ կետի համապատասխան, Բանկը իր մոտ սպասարկվող ՀՀ ֆինանսների նախարարության արտաբյուջետային բանկային հաշվից գանձապետական համապատասխան հաշվեհամարներին կատարել է Նորայր Սամվելի Երկնափեշյանի օգտին մաքսային վճարումներ /փաստացի/ 429593 /չորս հարյուր քսանինը հազար հինգ հարյուր իննսուներեք/ ՀՀ դրամի գումար չափով:

Կարգի 15-րդ կետին համապատասխան, ՀՀ Տավուշի մարզպետարանի կողմից Պայմանագրի բնօրինակը և տվյալ Պայմանագրի հիմքով վարկի փաստացի վճարումները հավաստող փաստաթուղթը ներկայացվել է ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Իջևանի հաշվառման-քննական բաժանմունք՝ GAZ 3102 մակնիշի տրանսպորտային միջոցի նկատմամբ Նորայր Սամվելի Երկնափեշյանի սեփականության իրավունքը գրանցելուց հետո արգելադրում կիրառելու համար:

Պայմանագրի «Հանձնարարական» բաժնի համաձայն, Վարկառու-Գրավատուն հանձնարարում է իր բնակության վայրը սպասարկող ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանության» ծառայության ստորաբաժանմանը Պայմանագրով նախատեսված գրավի առարկա տրանսպորտային միջոցի նկատմամբ իր սեփականության իրավունքը գրանցելուց հետո գրանցման վկայականն ուղղակի տրամադրել Վարկատու-Գրավատունին:

Կարգի 17-րդ կետին համապատասխան, GAZ 3102 մակնիշի տրանսպորտային միջոցի նկատմամբ Նորայր Սամվելի Երկնափեշյանի սեփականության իրավունքը գրանցելուց հետո ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Իջևանի բաժանմունքը առձեռն սեփականության իրավունքի գրանցման 21.03.2011թ. թիվ 12AA002026 վկայականը ներկայացրել է ՀՀ Տավուշի մարզպետարան՝ վարկի փաստացի վճարումների չափով տրանսպորտային միջոցի վրա կատարելով արգելադրում:

Պայմանագրի «Վերադարձի ժամկետ» բաժնի համաձայն, տրամադրված վարկի գումարը Նորայր Սամվելի Երկնափեշյանի կողմից պետք է վերադարձվեր վարկի փաստացի տրամադրման օրվանից վեց ամսվա ընթացքում, այսինքն՝ մինչև 16 սեպտեմբերի 2011թ.:

02.02.2012թ. թիվ 07/22/323-12 գրությամբ Նորայր Սամվելի Երկնափեշյանը ծանուցվել է վերը նշված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու, վարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում դատական կարգով բռնագանձելու մասին:

22.02.2012թ. Նորայր Սամվելի Երկնափեշյանը դիմել է ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին հայտնելով այն մասին, որ ստացել է ծանուցում վարկի ժամկետանց գումարները և դրանց մարման ժամկետի խախտման համար հաշվարկված տույժերը դատական կարգով բռնագանձելու մասին և պարտավորվել մինչև 2012թ. ապրիլի 2-ը մարել վարկի ամբողջ գումարը և մարման ժամկետի խախտման համար հաշվարկված տույժերը, սակայն մինչ օրս պատասխանողը մուծել է 350000 ՀՀ դրամ գումար, այսինքն, չի կատարել ՀՀ պետական բյուջեի նկատմամբ Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, որի արդյունքում պատասխանողի պարտքը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ կազմում է՝ 79593 /յոթանասուներեք հազար հինգ հարյուր իննսուներեք/ ՀՀ դրամ /ժամկետանց պարտավորության գումարը/ և դրա նկատմամբ սկսած կետանցի օրվանից՝ 16 սեպտեմբերի 2011թ.-ից մինչև պարտավորությունների փաստացի կատարման պահը սահմանված կարգով հաշվարկված տոկոսները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ և 90-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 27-րդ, 248-րդ հոդվածների, 251-րդ հոդվածի 2-րդ մասի, 345-րդ և 347-րդ հոդվածների, 352-րդ հոդվածի 1-ին մասի, 368-րդ հոդվածի 1-ին մասի, 408-րդ հոդվածի, 411-րդ հոդվածի 1-ին կետի, 877-րդ հոդվածի 1-ին մասի, 880-րդ հոդվածի 1-ին մասի, 881-րդ հոդվածի 1-ին մասի, 887-րդ հոդվածի 1-ին մասի վկայակոչմամբ հայցվոր «ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը խնդրել է պատասխանող Նորայր Սամվելի Երկնափեշյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի բռնագանձել 79593 /յոթանասունհինգ հազար հինգ հարյուր իննսուներեք/ ՀՀ դրամ՝ բռնագանձումը տարածելով գրավի առարկա հանդիսացող գույքի վրա, իսկ գրավի առարկայի իրացումից ստացված միջոցների անբավարարության դեպքում՝ պատասխանողի այլ գույքի վրա: Խնդրել է պատասխանողից բռնագանձել նաև ժամկետանց պարտավորության գումարի նկատմամբ սկսած կետանցի օրվանից՝ 16 սեպտեմբերի 2011թ.-ից, մինչև պարտավորությունների փաստացի կատարման պահը հաշվարկված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները, ինչպես նաև պարտավորեցնել պատասխանողին հոգուտ ՀՀ պետական բյուջեի մուծել պետական տուրքի գումարը:

12.11.2012թ. նշանակված դատական նիստին հայցվորի ներկայացուցիչ Արման Գևորգյանի կողմից դատարան ներկայացված գրությամբ ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս.Դավթյանը տեղեկացրել է, որ ՀՀ կառավարության 24.02.2011թ. թիվ 161-Ն որոշմամբ հաստատված կարգով «ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի և քաղաքացի Նորայր Սամվելի Երկնափեշյանի միջև 15.03.2011թ. կնքված «Բյուջետային վարկի տրամադրման և տրանսպորտային միջոցի գրավադրման մասին» ՏԱՎ 0214 պայմանագրի հիման վրա Նորայր Երկնափեշյանին տրամադրված բյուջետային վարկի գումարը՝ 429593 ՀՀ դրամը և ժամկետանց պարտավորության գումարի նկատմամբ սկսած կետանցի օրվանից՝ 16 սեպտեմբերի 2011թ.-ից, մինչև պարտավորությունների փաստացի կատարման պահը սահմանված կարգով հաշվարկված 46770 ՀՀ դրամը մարվել են 09.11.2012թ. դրությամբ, ինչպես նաև հոգուտ ՀՀ պետական բյուջեի է մուծվել 2600 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս.Դավթյանը խնդրել է կարճել Նորայր Սամվելի Երկնափեշյանի նկատմամբ հարուցված գործի վարույթը:

Միաժամանակ, գրությամբ կից ներկայացվել է հոգուտ ՀՀ պետական բյուջեի որպես պետական տուրքի գումար մուծված 2600 ՀՀ դրամի կտրոնի պատճեն:

3. Պատասխանողի դիրքորոշումը.

Դատական նիստի տեղի և ժամանակի մասին պատշաճ ձևով ծանուցված պատասխանող Նորայր Սամվելի Երկնափեշյանը չի ներկայացել գործի քննությանը և դատարանին հայցադիմումի պատասխան չի ուղարկել:

III

1. Գործի փաստը.

Հայցվոր «ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը հրաժարվել է ներկայացված հայցից:

2. Կիրառելի իրավունքը /իրավական հիմքերը/.

Սույն գործով ենթակա են կիրառման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 6-րդ մասը և 110 հոդվածը:

3. Իրավական խնդիրը.

Գործի լուծման կապակցությամբ դատարանը պետք է պատասխանի հետևյալ իրավական հարցին. արդյոք հայցվորի՝ հայցից հրաժարվելը հիմք է գործի վարույթը կարճելու համար:

4. Վերլուծություն.

Քննելով գործը նշված հիմքի սահմաններում, համադրելով գործի փաստը կիրառելի իրավունքի նորմերի հետ, դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործի վարույթը պետք է կարճել հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործի փաստերի համաձայն, հայցվոր «ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը հրաժարվել է ներկայացված հայցից:

Դատարանը, հետազոտելով ներկայացված հայցադիմումից հրաժարվելու վերաբերյալ ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս.Դավթյանի 09.11.2012թ. գրությունը, գտնում է, որ քաղաքացիական գործի վարույթը պետք է կարճել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 6-րդ մասի հիմքով, համաձայն որի, դատարանը կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից:

Հաշվի առնելով այն, որ պետական տուրքի վճարումը հայցվորի միջնորդությամբ հետաձգվել է, իսկ 09.11.2012թ. պատասխանողի կողմից վճարվել է ներկայացված հայցապահանջի չափին համամասնորեն պետական տուրք՝ 2600 ՀՀ դրամի չափով, դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 6-րդ մասով, 110, 130-132, 140 և 140.1 հոդվածներով, դատարանը՝

Վ Ն Ո Ե Ց

1. Քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի «ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի ընդդեմ Նորայր Սամվելի Երկնափեշյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, կարճել հայցվորի՝ հայցից հրաժարվելու պատճառաբանությամբ:

2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ

Ա. Ս. ԽԱԶԻՎՅԱՆ

